

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԹՈՒԹԻՒՆ.

### ՄԵԾ ԵՂՋԻՔԱԿԱՐ ԱՆԱՍՈՒՆԵԼՐ

**Աերը.** Ամէն մի գիւղացու և ամէն մի անասնատիրոջ պարտականութիւնն է հոգս տանել իւր անասունների կերի մասին, որի համար կարեռ է պահպանել մի քանի կանոններ: Պէտք է հոգալ, որ կճնդանին ձմեռուայ համար ունենայ բաւական քանակութեամբ կեր, որ լաւ, հասած ու զօրեղ լինի: Խսկ յղի կովերինը բացի դրանից նաև դիւրամարս: Ընդհանրապէս կերը պէտք է լինի մաքուր, որ սիրով ուտեն. մգլած նեխուած և փոտած նիւթերը պէտք է դուրս թափել և այլն<sup>1)</sup>:

1) Կովկասի գիւղական ժողովուրդը անասնապահութեան մասին շահ է անասնապահութիւններ ունի, նա շահ է միացել, չի խմանում, որ անասնապահութիւնը երկագործութեան մի կարեւոր նիւթ է, չի խմանում, որ նա պակաս շահաւում չէ նողագործութիւնից. նա անասուններ խնամել չգիտ: Աւելի դժբախտ վիճակի մէջ են գտանում եզներն ու կովերը: Մեր գիւղացիները կովից պահանջել զիտեն մեծ բանակուրեամբ կար, բայց երեկ կանոնաւոր կերպով խնամ չեն տանում, չեն մտածում նոցա կերի մասին. կարծում են, թէ միմիայն չոր դարման ուտեցնելով կարող են իւրեանց պահանջածը ոտանալ: Սիխում են շահ անգամ խեղն եզներին անհար նանապարհով, երեսն մինչեւ ծննդերը ցելի մէջ 40—60 փ. ծանրութեամբ բեռ բաւել նին, բոլորովին անյարմատ եւ նոյն խսկ կենդանիների համար վնասակար սալլով, բայց կանոնաւոր կերակրելով սնուցանելով մասին շահ է նոցա տանում: Խեղն անասունների ձմրան միակ կերը չոր յարդն է միայն, այն էլ այնքան ֆիշ են տալիս, որ խեղները շահ անգամ բաղցած են մնում: Այսպիսի պայմաններում շահ պարզ է կարնատու եւ մանաւանդ յդի կովերի վիճակը. նոյն ձեռք չեն բերում այնքան սնունդ, որ կարողանան թէ իրանց մարմնին եւ թէ իւրեանց արգանձում եղած նորին սնուցանել, որի պահանով էլ այդպիսիները նախ՝ որ դժուարածին են լինում եւ երկրորդ՝ որ ծնում են բոյ կազմուածքով նորեր: Գուցէ շասեր տեսած լինին մեր գիւղերում ձմեռները միմիայն դարմանով եւ այն էլ ոչ կուտ կուրով կերակրուած անասունների ցաւակի վիճակը, որոնք շահ անգամ չեն կարողանում նստած տեղից վեր կենալ, պէտք է պոչերից բռնելով վեր բարձրացնել:

Վերջապէս մեր գիւղացիներն են պէտք է մի ֆիշ սրափուեն եւ նետեւն եւրոպայի գիւղացիների օրինակին, որոնք ոչ միայն դարման են տալիս եղջիւրաւոր անասուններին, այլ նաև խոս ու շահ ուրիշ բաւական նիւթեր: Եւ ան ժնարինի կանոնաւոր եւ սննդարար նիւթերով կերակրելուն, նոցա կովերն անհամեմատ աւելի շահ է աւելի բաւել մեր կովերը, նոցա կենդանեաց բար զգալի կերպով աւելի է (ուրեմն միա աւելի է տալիս) բան մերը: Այսպէս օրինակ, նոցա մի եզր կամ կովը բառում է (ծանրութիւնը) մինչեւ 40—50 եւ երեսն դեռ աւելի՝ 60 փ., մինչդեռ մերը 15 փ. նոցա մի կովը օրական 5 վերյո կար կարող է տալ, խսկ մերը ամենաշար մի վերյօ: Այս բոլոր զիսաւորապէս առաջ եւ սննդարար կեր տարու եւ կանոնաւոր խնամելու նետեւանքն է:

նոյնպէս ամէն մի կենդանու, նոյնպէս և մեծ եղջեւքաւոր անասունների կերը պէտք է լիր մէջ պարունակէ մենդարաք նիւթերի մի որոշ քանակութիւն: Եղջեւքաւոր անասունների կերը բաղկացած է լինում մի քանի հիմնական մնագարաք նիւթերից: Եթէ չորացնելով կերի միջից հեռացնենք ջրային մասերը, կմնայ միայն չոր նիւթը: Այդ չոր նիւթի այն մասը, որ այցուում է, կոչուում է նորա զործարանաւոր բաղադրիչ մասը, իսկ այցուելուց յետոյ իրբե փոշի մնացած մասը կոչուում է հանգային կամ անզործարանաւոր: Չոր նիւթի ինչպէս առաջնուն, նոյնպէս և երկրորդ բաղադրիչ մասերը անսպատճառ պէտք է բաւական քանակութեամբ լինին կենդանու կերի մէջ, որովհետեւ նորա մարմինը բաղկացած է նոյնպիսի զործարանաւոր և անզործարան նիւթերից: Բայց կենդանիներին կերակրելիս բաւական չէ միայն, որ նորա ստանան անհրաժեշտ քանակութեամբ գործարանաւոր և անզործարանաւոր կամ հանգային նիւթեր, որովհետեւ զանազան գործարանաւոր և անզործարանաւոր նիւթերը կենդանու կենանքի և արդիւնաբերութեան համար միևնոյն նշանակութիւնը չունին: Այդ պատճառով այն աղիւսակների մէջ, որ ցոյց է տրուում իւրաքանչիւր կենդանու համար որոշուած օրական մնագարաք նիւթերի քանակութիւնը, խօսուում է ոչ թէ գործարանաւոր մնագարաք նիւթերի մասին ընդհանրապէս, այլ առանձնապէս նոցա մասին, որոնք պարունակուում են իւրեանց մէջ բորակածին (ազոր), այսինքն բորակային նիւթեր և կամ, ընդհակառակը, որոնք չեն պարօւնակուում բորակածին (այսպէս օրինակ, միս կարող է ստացուել միայն առաջիններից՝ բորակային նիւթերից): Առհասարակ կենդանին գործարանաւոր նիւթերի այդ խմբերից միայն մէկն ու մէկով կերակրուելով ապրել անկարող է: Աղիւսակների մէջ բոլոր ոչ բորակային մնագարաք նիւթերը միասին չեն դասաւորուած լինում: Նորա բաժանուած են լինում երեք մեծ խմբերի՝ ճարպ, ածխաջրածին (յցլեօծ), լինչպէս օրինակ փայտանիւթ և այլն և միւս մնացած ոչ բորակային նիւթերը: Այս խմբերը պէտք է առ անձին առ անձին նշանակել, որովհետեւ ճարպը մնագարաքարութեան առակելացից միւսներից աւելի զօրեղ է: Այդպիսի աղիւսակները անուանուում են սննդառուրեան չափեր (քորմօնյա հօրմ): Սովորաբար սննդառուրեան չափերի մէջ բորակային նիւթերի տեղ գործ է ածւում յաճախ սապիտակուց անունը, որովհետեւ այդ նիւթերի մէջ սպիտակուց ամենաթանկագին, կարեոր և միևնոյն ժամանակ ամենած սննդարաք բաղադրիչ մասն է կազմուում: Միւս բորակային նիւթերի մնագարաքութիւնը կամ կասկածելի է և կամ վնասա-

կար: Կերի յիշեալ նիւթերի մի մասն է միայն մարմինը իւրացնում, իսկ միւս մասերը անցնում են կենդանիների աղիքների միջով և ոչ մի փոփոխութեան չեն ենթարկւում, ուրեմն և իբրև սննդարար նիւթ ոչ մի նշանակութիւն չունեն:

Կերեր կարելի է չորս կարգի լրաժանել\* զլիաւոր, զօրեղ, օժանդակ և լրացուցիչ:

Գլխաւոր կոչւում է այն կերը, որ միւսների հետ համեմատած աւելի մեծ քանակութեամբ է տրւում կենդանիներին: Գլխաւոր կերը իւր մէջ պէտք է պարունակէ կենդանու մի անդամուայ (ժում) համար որոշուած կերի պարունակած սննդարար նիւթերի գոնէ կէս մասը:

Զօրեղ կերի նշանակութիւնն այն է, որ կարողանայ լրացնել գլխաւոր կերի պակասը\* բայց եթէ գլխաւոր կերը իւր մէջ բաւականաչափ սննդարար նիւթեր է պարունակում, այն ժամանակ զօրեղ կերը աւելորդ է գործ ածել:

Օժանդակ կերը դործ է ածւում նրա համար, որ կերի ծաւալը մեծանայ, որով նախ՝ մեղմանում է բոլակային կերի չափաղանց զօրեղ ներգործութիւնը և երկրորդ՝ թանգ չի նստում այլ ևս կենդանիներին կերակրելը:

Լրացուցիչ կերը ծառայում է նորա համար, որ ընդհանուր կերի մէջ որ և է սննդարար նիւթի պակասութիւնը լրացուի և կամ նորա համար, որպէս զի կենդանու վերայ որ և է ազդեցութիւն յառաջացնի:

Խւրաքանչիւր տեսակ խոտակեր ընտանի կենդանիների համար համապատասխան կեր կայ:

Խոշոր եղջերաւոր անասունների զլիաւոր կերն և մարգագետնի կամ հարոսի խոտար, գարնանացանի գարմանը, բազուկը (ճակնդեղ—кормовая съекла), գետնախնձորը\* զօրեղ կերն և առույտ, թեփ և կոպտոն\*. Լրացուցիչ կերն և գարի, վարսակ և հաճար:

Պէտք է առանձնապէս ուշագրութիւն դարձնել և զգուշաւոր ու չտիաւոր ընտրութիւն անել կենդանեաց օրական կերի մէջ այնպէս, որ նորանում լինի սննդարար նիւթերի պահանջած չափը և նիւթերը համապատասխան լինեն կենդանու ապրուստի եղանակին և նպատակին և որպէս զի ամէն անդամ, բացի սննդարար նիւթերից, կենդանին ստամոքսը լցնելու համար ստանայ նաև անհրաժեշտ քանակութեամբ խոշոր, դժուարամարս կեր:

Այս բոլոր կանոնները ընդունուած են իբրև անփոփիսելի, գործադրելի մի ճշմարտութիւն: Բայց եթէ աչքի առաջ ունենանք, որ մէջ եղջերաւոր անասունների համար որոշուած այս

չափը մի միջին չափ է, որը գուրս է թերուած բազմաթիւ կենդանիների վերայ տեղի ունեցած փոքրերից, և իրականութեան մէջ միջին կամ միջակ կենդանի գոյութիւն չունի, իւրաքանչիւր կենդանի ունի իւր առանձնայատկութիւնները և շեղումները, հետեւապէս և կերի ժամանակ մնունդի չափ որոշելը խիստ գժուար է և նոյն իսկ բոլորովին անհնարին և եթէ յամառութեամբ հետեւողներ լինեն, այդպիսինները արդիւնաւոր հետեւանքների չեն համնի: Ահա հէնց այդ պատճառով այստեղ աւելորդ է յառաջ բերել մննդի չափերը որոշող մի որ և է աղիւսակ, որովհետեւ ոչ մի գործնական նշանակութիւն չունի: Բայց որպէս զի կերը համապատասխան լինի նշանակած նպատակին և որպէս զի նիւթերը անսմիտ և անօդուտ կերպով չվատնուին, լաւ կլինի պահպանել հետեւեալ կանոնները.

1) Մի կերից միւսին անցնելիս պէտք է խիստ յաջորդականութիւն պահպանել այսպէս օրինակ. եթէ արօտատեղերում կանաչ խոտ արածելուց անմիջապէս յետոյ կենդանիները աշնանը սկսեն կերակրուել չոր խոտով և կամ ընդհակառակն, եթէ գարնանը չոր խոտից անցնեն կանաչի, նոցա կաթը կպակասի և քաշը կդադարի բարձրանալուց:

2) Կերի ժամանակ անհրաժեշտ է ուշք դարձնել, որ նա մի որոշ ծաւալ ունենայ: Թէպէտ կարելի է վերցնել փոքր չափով այնպիսի կեր, որ իւր մէջ պարունակում է կենդանու համար բաւարար չափով կարեսը մննդարար նիւթեր, բայց նոցանից կենդանին կանոնաւոր կերպով չի կարող օգտուել, որովհետեւ ստամոքսը լցուած չլինելու պատճառով մարսողական նիւթերը լաւ չեն արտադրւում և կենդանին անկարող կլինի ստամոքսից կերը յետ բերել որոճալու բայց եթէ կենդանիներին այնքան շատ մննդարար նիւթեր տանք, որ ստամոքսը լցուի, նա անկարող կլինի այդքանը մարսել, նշա ստամոքսը կխանդարուի և կենդանին կարող է նոյն իսկ զգալի վնասներ կըել: Հասկանալի է, որ ձեռնտու չէ կերակրել նաև խիստ մեծ ծաւալ ունեցող նիւթերով, որովհետեւ կենդանու ստամոքսը կարող է տեղաւորել իւր մէջ և մարսել միմիայն որոշ ծաւալ ունեցող կեր և մենակ մեծ ծաւալ ունեցող կեր գործածելով, կենդանին քաղցած կարող է մնալ, հետեւապէս և կդադարի արդիւնարեր լինելուց: Պէտք է միշտ ընտրութիւն անել կերերի մէջ և աշխատել յարմարաւոր նիւթեր ընտրել և կամ մի խառնուրդ կազմել՝ խոտի, դարմանի, իրեւ մեծ ծաւալ ունեցող կերերի հետ, որոնք լաւ ներդործութիւն են անում մարսողական նիւթեր արտադրուելուն:

3) Եթէ կենդանիներին միաժամանակ կերակրում են այլ և այլ նիւթերով, այն ժամանակ օգտակար և կանոնաւոր կլինի ամբողջ օրուայ համար այսպէս սահմանել. աւելի կոշտ ու կոպես, դժուարամարս և մեծածաւալ կերը պէտք է տալ անասուններին գիշեր ժամանակ, որովհետեւ նորա միջոց չատ կաւեճանան լաւ ծամելու և մարսելու: Անհամ կոտ անասուններին դուք չեկող նիւթերը և կամ այնպիսիները, որոնց գեռ սովոր չեն անասունները, պէտք է տալ առաւօտները քաղցած ժամանակ, երբ սովորաբար նոցա ախորժակը սառտիկ գրգռուած է լինում:

Սովորական և աւելի լաւ թանկապին կերը պէտք է դորձ ածել ցերեկը, որպէս զի տէրը միջոց ունենայ վերահասու լինելու, որ կենդանիները հաւասար չափով ուտեն:

4) Նատ կարեսը է ուշք դարձնել նաև, որ կեր տալը և շուր խմացնելը տեղի ունենայ օրական որոշեալ ժամերում և որոշ շեալ թուով: Այդպիսի կանոնաւորութիւնը որոշ չափով պահպանում է մարտզաւթիւնը կանոնաւոր վիճակի մէջ և գիւրացնում կենդանեաց վերայ խնամք տանելու դորձը: Խիստ անմիտ բան կլինի, եթէ մարդ առանց մատածելու կերակրէ իւր անասուններին. այսպիսի ժամանակ եթէ մի կերից մինչեւ միւս կերն եղած միջոցը մեծ լինի, կենդանին կարող է քաղցած մնալ, երեմն էլ, ընդհակառակը, խիստ շուտ շուտ կերակրելով, կենդանիները հաճոյքից կոկեն աւելացած կերը կոխելուան ուների տակ: Եղջիւրաւոր անասուններին պէտք է ջրել օրական երկու անգամ, իսկ կեր տալ երեք անգամ: Ժամերի ընտրութիւնը կարող է կախումն ունենալ տէրերի ունեցած յարմարութիւններից, քայլ ցանկալի է, որ մէկ անգամը մինչեւ միւս անգամ ջրելու ժամանակամիջոցը 12 ժամ լինի և ձմեռը երեկոյեան տուած կերից մինչեւ առաւօտաց կերը 7 ժամից աւելի չանցնի: Մնացած ժամանակիներում կերերը պէտք է տալ հաւասար ժամանակամիջոց անցնելուց յետոյ:

Անասուններին խմացնելու ջուրը պէտք է ըոլորովին մաքուր լինի, ամենալաւ խմելու ջուրը գետերի և առուակների ջրերն են. Լաւ է նաև աղբիւրի և ջրհորի ջրերը: Եթէ հարկ լինի անասուններին լճակներից ջուր խմացնել, պէտք է այդ լճակները մաքուր պահել: Պղտոր, կանգնած, կանաչով ծածկուած ջրերը վնասակար են կենդանեաց առողջութեանը և ոչ միայն հիւանդութեան, այլ նաև նրանց մէջ ջարդ ընկնելու պատճառ են դառնում: Զմեռն անասուններին երեք չափոր է դուրս տանել ջրելու, որովհետեւ նախ որ շատ սառն ջրից կենդանիները ջերմում են և երկրորդ, որ սառն ջրից և դիւրասայթաք ճանաւ-

պարհով քայլելով յզի կոմերը կարող են վիժել և երսորդ, որ կթան կովերը նոյն պատճառներից կարող են նուազեցնել տուած կաթի քանակը: Չմեռն ամենից լաւ է ջուրը պահել ախուներում առանձին փայտեայ կամ քարեայ տաշտերի (գուռերի) կամ չաների մէջ, որպէս զի անասունները երբ կամենան, կարողանան լոմել: Ախուներում ջուրը բաւականնեն տաքացած է լինում և անասունները խմում են առելի ախորժակով, ջրելու ամանը պէտք է շատ մաքուր պահել:

Մնում է, որ կարնատու, աշխատաւոր և մասցու եղջիւրաւոր անասուններին կերակրելիս իւրաքանչիւր տեսակի վերայ առանձին առանձին ու շադրութիւն դարձնենք, խնամք տանենք:

Կարնատու կովի կերը. Մեծ քանակութեամբ և լաւ տեսակ կաթ ստանալու համար ոչ միայն կարեսը է, որ կովը ազնիւ և կաթնոտ ցեղից յառաջացած լինի, հարկաւոր է ու շագրութեան առնել նաև այս կամ այն կերի յատկութիւնը և չափը, որով հետեւ ինչպէս կաթի քանակութիւնը, նոյնպէս և յատկութիւնը կախումն ունի կերից: Բայց որովհետեւ կաթը իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաթնային գեղձի լուծուող վանդակիկները, այս պատճառով կովից ստացուած կաթի թէ քանակութիւնը և թէ յատկութիւնը ամենից աւելի կախումն ունի այդ գործարանի այս կամ այն ստափճանի զարդացումից և յատկութիւնից: Այս ընական օրէնքի ճշմարտութիւնը հաստատում է նրանով, որ եթէ զանազան կովերի միակերպ կերակրենք և խնամենք, հաւասար քանակութեամբ կաթ չեւ ստացուի. Չահիլ կովերը աւելի քիչ կաթ կատան, երկրորդ և երրորդ ձնից յետոյ, երբ կաթի գեղձը իւր վերջնական դարդացմանը և ընական մեծութեանը կհասնի, կաթի քանակն ես կմեծանայ, իսկ ձերութեան հաստակում գեղձը կփոքրանայ, որով և կթուլանայ նրա գործունէութիւնը: Կաթնային վատ գեղձ ունեցող կովին որքան ուղղում են լաւ կերակրեն, այնու ամենայնիւ նորա արգիւնաբերութիւնը միայն մինչեւ մի որոշ աստիճան կբարձրանայ, որից յետոյ կերի աւելին ոչ թէ կաթի կիտոխուի, այլ մսի և ճարպի: Այսու ամենայնիւ կերի գերը կաթ արտազրելու գործում խիստ մեծ է և կարեոր. նա նիւթեր է մատակարարում գեղձի արգէն կաթ գարձած վանդակիկներին վերանորոգելու համար, որով ամէնից առաջ ազգում է կաթի քանակի վերայ: Յայտնի է, որ մարմնի բոլոր հիւսուածքները, գրանց թւում և կաթի գեղձը, պարունակում է սպիտակուցային նիւթեր. ահա այս պատճառով կաթնային նոր վանդակիկներ հիմնելու համար, անհրաժեշտ է ողիստակուցային նիւթերով հարուստ կեր: Հարուստ ասելով կերի

մէջ սպիտակուցի քանակութիւնը չպէտք է չափազանց շատ լինի, որովհետև այդպիսի գէպըում նորա նշանաւոր մասից կյառաջաւնան այնպիսի թթու նիւթեր, որ կաթի արտադրութեանը բացարձակ վնաս կապատճառեն: Որովհետև կթի կովը իւր ստացած մննդարար նիւթերի մի մասը գործ է գնում կաթ պատրաստելու, իսկ միւս մնացածը իւր մարմնի կազմուածքը առողջ վեճակի մէջ պահելու համար, այս պատճառով նոցա համար երբեք մննդարար, մանաւանդ սպիտակուցային նիւթեր չպէտք է ինայել, որովհետև սպիտակուցային նիւթերի մէծ մասը հէնց նոյն իսկ կաթի հետ միասին է դուրս գալիս, հակառակ գէպըում կենդանին շատ ծախսելով, բայց քիչ ստանալով, աւելի տրամադիթ կլինի հիւանդանալու, մանաւանդ թոքախտով: Ինչ վերաբերում է կաթի վերայ ունեցած ճարպի ներգործութեանը, փորձերը հակառական հետեանքներ են ունեցել. այնուամենայնիւ կերի մէջ եթէ քիչ քանակութեամբ ճարպային նիւթեր լինեն, օգտակար է կաթի համար:

Մեծ եղջեւաւոր անասունների ամենօրեայ կերը պէտք է բաղկացած լինի հետեւեալ նիւթերից. առհասարակ գործարանաւոր նիւթերից սպիտակուցից, նարպից և ածխաջրածինից. կաթնատու անասունների կերն ևս նոյն բաղադրութիւնը պէտք է ունենայ: 1000 գրմ. կենդանի քաշ ունեցող մի կթի կովի համար որոշուած մննդարար նիւթերի կանոնաւոր չափը (ըստ Վ.Օ.Ֆի) հետեւեալն է. 24 գրմ. առհասարակ գործարանաւոր նիւթեր. 2,5 գրուանքայ սպիտակուց, 12,5 գրվանքայ ածխաջրածին և 0,7 գրմ. ճարպ: Այսպիսի բաղադրութիւն ունեցող կերը համապատասխան կարող է լինել արօտատեղերի լաւ խոտին և ճշմարիս որ փորձերը ցոյց են տուել, որ ամենալաւ կերը կաթնատու անասունների համար մարգագետինների լաւ խոտն է:

Կերն ընդունակ է փոխել նաև կաթի յատկութիւնը: Կաթնատու կովին առատ և անխնայ կերակրելով կաթի մէջ չոր նիւթերի քանակը աճում է, բայց բաղադրիչ մասերի փոխադարձ յարաբերութիւնը (սպիտակուցի և ճարպի) սովորաբար մնում է անփոփոխ: Կերը փոխում է ոչ միայն կաթի, այլ և որպանից ստացուած նիւթերի՝ իւղի, պանրի ինչպէս քանակութիւնը, նոյնպէս և յատկութիւնը՝ գոյնը<sup>1</sup>), համը, հոտը ևայլն: Բոլոր հառկառոր բոյսերի՝ հաճարի, ցորենի, դարու, վարսակի, կորեկի, նաև եղիպտացորնի, վուշի, կանեփի, սիսեռի, լորու հատիկները, թիթեանածաղիկ բոյսերը՝ ոլոռն, ոսպը, առուոյտը<sup>2</sup>), քուշ-

1. Գագարը, օրինակ, կարին դեղին գոյն է տալիս եւալլն:

2. Հասարակ առուոյտը գարնանը շուտ է հասնում եւ շատ օգտակար է նո-

նէն, բամբռեկի կուտը, հասարակ կորնգան, նաև ալիւրը, թեփը<sup>1)</sup>: Կոպառնը<sup>2)</sup>, քուսպը և մի քանի այլ նիւթեր ընդունակ են կաթի յատկութիւնը բարելաւելու+ ընդհակառակը՝ դարմանը, մանաւանդ վատ տեսակ խոտերը և մի քանի ուրեց, իբրև կեր գործածուող, նիւթեր, ինչպէս օրինակ, մի քանի ծառերի ճիւղքերը, տերեները, վատ աղդեցութիւն են ունենում կաթի վերայ: Բացի այս կերերից կայ նաև մի երրորդ խումք կեր, որոնց մէջ ջրային մասը մեծ տեղ է բռունում: Այս կարգին են պատկանում արմատապտուզ բոյսերը՝ բազուկը (ճակնդեղ), գազարը, շաղգամը և ուրիշները, նաև կարթօֆիլը<sup>3)</sup>, որոնք բոլորն էլ ներգործութիւն են անում կաթի քանակի վերայ, շատացնելով նորա ջրային մասերը: Սըանց թւում կարելի է հաշուել նաև արազի և գարեջրի գերը կամ տիլը (տկանք, չաշ): Սոցանից կարթօֆիլը, գազարը, բազուկը, շաղգամը, կաղամբը, զանազան պտուղները և բանջարեղէնները թէպէտ շատացնում են կովի կաթի քանակը, բայց տալիս են ջրավ, թոյլ կաթ: Նման աղդեցութիւն են անում նաև արազի և գարեջրի գործարանների տկանդները: Նաև ամէն մի փչացած կեր, բացի կենդանու առողջութեան վերայ վատ աղդեցութիւն ունենալուց, փչացնում է նաև կաթը ու նորանից յառաջացած նիւթերը: Ընդհանրապէս վատ կերը, մանաւանդ քիչ բորսկ պարունակող նիւթերը, երբէք այնպիսի համեղ կաթ չեն տալիս, ինչպիսին ոտացւում է ճոխ բուսականութիւնից կամ առուոյտից: Զմրան չոր և միմիայն յարգից բաղկացած կերը գժգոյն կաթ է տալիս, մինչդեռ գարնանը և ամքանը ստացւում է շատ լաւ դեղին կաթ, որովհետեւ կովերը արածում են համեղ բոյսեր:

բանով կերակրել կովերին, որպինետեւ դրանով կերակրուող կովը տա կար է տալիս: Դաշերի խոտն առուոյտի չափ սննդարաց չէ:

1. Կերակրանշիր կրի կովին ամէն անզամ 5 գրկ-ից աւելի չպէտք է տալ:
2. Ամէն անզամ 4 գրկ.:

3. Խորհուրդ են տալիս կարնատու անասուններին կերակրել մանրած կարոքիրով (1000 գրվանքայ քաւ ունեցող կարնատու կովին օրական պէտք է տալ 10–15 գրվանքայ նում եւ 15–20 գրվանքայ եփած կարքօժիլ): Հում կարքոժիլը աւելացնում է առաւելապէս կարի բանակը, իսկ եփածը՝ մար: Եթէ այս չափից աւելի տրուի, կարը եւ իւղը անհանոյ նամ կսանայ: Յոդի կովերին պէտք է տալ միայն եփած կարքօժիլ դարմանի նետ խառն եւ այն էլ սովորականից աւելի պակաս բանակութեամբ, նակառակ դէպքում կենդանիները դժուարութեամբ կը մարսն, փարլուծութիւն կյառաջանայ եւ զուցէ վիժուամ տեղի ունենայ. այս պատճեառով նում տուած ժամանակ վերան աղի ջուր են ցանում: Այսպիսի դէպքերում կարքօժիլի վերայ պէտք է աւելացնել նաև ուրիշ կեր. այսպէս օրինակ, 16 գրվանքայ կարքօժիլի վերայ պէտք է աւելացնել 15 գրվանքայ զարնանացանի դարման եւալլի:

Ապացուցուած է, որ իբրև կեր դորձածուող նիւթերից մի քանիսը ընդունակ են կաթի միջի ճարպային մասերը աւելացնեալու. այդպիսիներից է օրինակ, քուսպը, կոպտոնը ևայլն. թէպէտքիչ չափով, բայց համարեա նոյն տեսակից են նաև համիաւոր բոյսերի հատիկները և թիթեռնածաղիկ բոյսերը. սոցա մէջ տէքի են ընկնում վարսակը և մի քանի ուրիշները:

Մեզանում գարնանը, ամբանը և համարեա մինչեւ աշնան կէսերը ըոլոր եղջիւրաւոր անասունները անց են կացնում արօտատեղերում և գոհանում եղած ըուսականութեամբ, որով և կովերի կաթը աւելանում է: Այգպէս են վարւում ըոլոր լեռնային երկրների ընակիչները: Արտասահմանում համարեա ամէն տեղ, շատ քիչ բացառութեամբ, աւելի յարմարաւոր են համարում նոյն խիլ ամբանը կաթնատու անասուններին ախոռներում պահել, քան արօտներում, որովհետեւ այն ժամանակ կարելի կլինի նոցա աւելի լաւ կերակրել, նոցանից աւելի մէծ չտփով կաթ ստանալ. սակայն այդ կերպ կերակրած անասունների կաթից պատրաստած լւղը, պանիքը այն առաւելութիւնները չունին, ինչ առաւելութիւններ որ ունի արօտներում արածող կովերից ստացուածը: Կաթնատու եղջիւրաւոր անասուններին ախոռներում պահելը ձեռնոտու է միայն սակաւահող երկրների ընակիչներին, որտեղ անասունների համար յատկապէս զանազան տեսակ խոտեր են ցանում և բացի գրանից իբրև կեր գործ են ածում նաև զանազան գործարաններից գուրքութափած շատ աւելորդ նիւթեր: Ախոռներում պահելու գլխաւոր պատճառն այն է, որ արտասահմանում զանազան ժամանակներում ցանում են այլեացլ տեսակ խոտեր, և այնպէս են յարմարեցնում, որ ամբողջ ամառուայ ընթացքում կենդանիները կանաչ կերի պակասութիւն չեն զգում:

Գարնան սկզբներին կովերին մէկէն ի մէկ չպէտք է բաւականալ միմիայն կանաչ խոտ տալով. պէտք է մի քանի օր կերակրել նաև խոտով ու գարմանով, որպէս զի նախ կենդանու փորը չլուծէ և երկրորդ, որ արօտներում քուսած խոտը դեռ այնքան քիչ է և պակաս մննդարար, որ կենդանին քաղցած կմնայ:

Արտասահմանում 1000 գրվանքայ ծանրութիւն ունեցող (մաքսային 800 գրվ.) կովը ընդունում են իբրև միութիւն, որի համար հարկաւոր է մի այնպիսի արօտատեղի, ուր համարձակ կերպով կարող են արածել երկու գլուխ ջահիլ եղջիւրաւոր անասուն կամ  $1\frac{1}{2}$  քուսակ, կամ  $2\frac{1}{5}$  ցուլ, կամ 10 ոչխար կամ 8 խոզ: Որպէս զի կովը առանց ուրիշ կերի կարողանայ միայն ա-

բօտատեղում արածելով բաւականանալ մօտաւորապէս 150 օր, հարկաւոր է որ այդ արօտատեղին մինչեւ 112 4|2 փ. չոր խոտ աաց; Հետեապէս և մէկ գլուխ անասուն կերակրելու համար, երբ արօտատեղին շատ հարուստ է բուսականութեամբ, ուրեմն շատ լաւ խոտաւէտ տեղ է, որ կարող է մինչեւ 200—250 փ. չոր խոտ (700—800 փ. կանաչ խոտ) տալ, հարկաւոր է մօտաւորապէս 1|2 գեսեատին այդպիսի արօտատեղի. Երբ արօտատեղին քիչ պակաս է առաջնից, բայց գարձեալ այնքան խոտաւէտ է, որ տակիս է 100—150 փ. չոր խոտ (300—400 փ. կանաչ խոտ), բաւական է 5|4 գեսեատինը. միջակ տեսակ արօտատեղու 1|1—1|2 գեսեատինը բաւական է մի կովի համար, երբ արօտատեղին վատն է, ուրեմն և աղքատ է բուսականութեամբ՝ 2|4 գեսեատին և վերջապէս շատ վատ արօտատեղու 3—5 գեսեատինը հազիւ բաւականացնէ; Եթէ արօտատեղին այնքան աղքատ է բուսականութեամբ, որ մի կովի բաւականութիւն տալու համար հարկաւոր է 3 գեսեատինից ոչ պակաս հող, կենդանին չէ կարող կշտանալ, այդ պատճառով էլ այդպիսի արօտատեղերում պէտք է արածեցնել միմիայն ոչխարներ:

Կաթնատու անասուններին ձմեռը պէտք է կերակրել օրական 3—5 անգամ առանձին մսուրքումը, մանաւանդ երբ թանկագին կեր է (օր. ալիւրի թեփ, կուպտոնը մանրած արմատապտուզների հետ ևայլն): Աւելի օգտակար է շուտ շուտ, բայց փոքր փոքր բարին տալ. միանդամից շատ կեր ստացած ժամանակ, կենդանին թողնում է նորա մի մասը մսուրքի մէջ, և յետոյ այլիս չի մօտենում, չի ուտում, որով և ի զոր վնաս է յառաջանում: Զպէտք է նաև շատ ուշ ուշ կերակրել, որպէս զի կենդանին քաղցած մնայ և կեր տեսնելուն պէս յարձակուի վերան և մկնի ագտհարար, առանց կանոնաւոր ծամելու կուլ տալ ու խանգարել իւր մարտողութիւնը:

Կաթնատու կովերին կերակրելիս գիւղացիների կամ ագարակատերերի գլխաւոր հոգուր պէտք է լինի կերի համար պատրաստի ունենալ բաւարար շափով այլ և այլ նիւթեր, որոնք միջոց կտան կենդանուն արօտատեղերում կանաչ խոտ արածելուց, առանց որ և է վնասի, աստիճանաբար անցնել չոր կերի: Այսպիսի անցումների ժամանակ կաթնատու կովերին պէտք է կերակրել այնպիսի բաղադրութիւն ունեցող կերով, որպիսին նոքա ոտացել էին արօտներում: Որովհետեւ սովորաբար կթի կովին տալիս են օրական միջակ յատկութիւն ունեցող մօտաւորապէս 30—35 գըմանքայ խոտ, որը իւր մէջ պարունակում է վերեւում յեշուած քանակութեամբ սպիտակուց, ածխաջուր, ճարպ ևայլն.

մի չափ, որ միայն կարող է կենդանու սնունդը հաւասարակշռութեան մէջ պահել և չափաւոս կաթ արտադրել, այս պատճառով միմիայն խոտով կերակրելով չպէտք է բաւականանալ. ճիշտ է, մեզանում կաթնատու անասունների, մանաւանդ կովելի ձմեռուայ գլխաւոր կերը համարեա չոր խոտն է, բայց միայն դրանով չպէտք է բաւականանալ. մննդարար նիւթերի մնացած մասը պէտք է լրացնել գարման, ալիւրի թեփ, դաղաք, ըաղուկ, շաղգամ, վուշի կոպտոն գործ ածելով, որոնք լաւ կաթ արտադրելու միջոցներ են: Այսպէս, օրինակ 15 գրվանքայ մարդագետնի խոտը, և գրվանքայ վարսակի գարմանը, 8 գրվանքայ համարի թեփը (որցի), և 40 գրվանքայ հացի արաղի տկանքը (նարդա), սոցա ամըողջ խառնուրդը կատարելապէս բաւական է 25 փութ ծանրութիւն ունեցող կովի համար: Այս խառնուրդի մէջ եղած հաճարի թեփի տեղ կարելի է գործածել կոպտոն:

Իբրև կեր կովերին կարելի է տալ նաև կանաչ եգիպտացորեն. նոքա սիրով կուտեն, առողջ կմնան, ուժեղ կլինեն և շատ կաթ կատն: Ճակնդեղի տերևները քիչ սնունդ կտան և կովերի փորը կլուծեն. այս պատճառով պէտք է գործածել մանրած և գարմանի հետ միասին: Կաղամբի տերևները սրանցից լաւ են, միայն գարձեալ պէտք է գարմանի հետ տալ: Նատ տեղերում հաճարի արտի մէջ անմիջապէս եգիպտացորեն են ցանում ու աշնանը քիչ քիչ կտրում և լաւ գարմանի հետ միասին գործադրում, միայն պէտք է զգուշանալ, որ տաք արևին այդպիսի արտը ոչխար, խոզ չմտնի, եթէ ոչ կվնասուի:

Դարմանը գանազան տեսակ է լինում: Կովին տալու գարմանը պէտք է լաւ պահուած լինի և շատ հասած. անձրւից, մեղրացօղից ու ժանդեց փչացած չպէտք է լինի: Ոլուի, ոսպի, սիսեռի ու վիգի գարմանը հացաբոյսերի գարմանից աւելի լաւ է: Կովերին բորակածինով հարուստ, թարմ, ցանած խոտերով կերակրելիս, լաւ կլինի աւելացնել վերաները քիչ քանակութեամբ գարման: Խառնուրդ խոտը՝ այսինքն խառն ցանած վիգը, ոլուն, գարին եթէ ծաղկելուց յետոյ հնձած ու չորացրած է, յատկութեամբ լաւ տեսակի չոր խոտի է հաւասար: Սովորաբար լաւ խոտի մի գրվանքան հաւասար է փչացած կամ թթու խոտի երկու գրվանքին:

Եգիպտացորենը և արմատապտուղները այն տեսակ նիւթերից են, որ օգտակար է գործ ածել նախ քան աշնանը ձմեռնային կերի անցնելը: Կաթնատու անասուններին լաւ է հացահատիկներ չտալ, նոցա տեղ կարելի է գործ ածել կոպտոն և

կամ գարու և վարսակի ալիւրից լափ, որի հետ կարելի է խառնել նաև գարման:

Բացի դրանից կենդանիների կերերը գիւղամարս անելու սպատակով, նոցա մասնաւոր պատրաստութեւնների են ենթարկում այն է՝ հոտելու, թթվելու և խմորման: Այս կերպ պատրաստելով, կերերի մննդական արժեքը թէպէտ շատ չի բարձրանում, այնու ամենայնիւ անասունները ախորժակով կակսեն ուտել, հեշտութեամբ կծամուի և աւելի գիւղամարս կլինի:

Կաւ երկրագործներ կենդանիների կերերը միմեանց հետ խառնելով ու տեսակ տեսակ փոքրեքով այնպիսի եղանակներ են գտած, որ քիչ ժամանուի լաւ և առողջ կեր են պատրաստում:

Երբեմն կերերը գործ են ածում թթվելով և երբեմն առանց թթվելու: Այսպէս օրինակ, կարելի է տալ առանց թթվելու նախօրօք մանր կտրտած արմատապուղները, շաղդամը, գաղաքը, բաղուկը դարմանի հետ խառն: Այս խառնուրդի վերայ կարելի է աւելացնել նաև քիչ մանրած խոտ, որից յետոյ պէտք է յուսալ, որ կովը լաւ և առատ կաթ կտայ: Այսպիսի գէպըտում ամէնից առաջ պէտք է տալ կաղամթի տերեւ սամիւններից աւելի պակաս մննդարար է, բացի գրանից երկար էլ չի պահուի: Արանից յետոյ պէտք է տալ գդում, գետնախընձոր բաղուկի հետ միասին (միշտ պէտք է դարմանի հետ միասին տալ), որոնք շատ կաթ են տալիս և գիրացնում<sup>4)</sup>: Ամէնից վերջը պէտք է տալ շաղդամ, որովհետեւ ամէնից աւելի շատ կդիմանայ և կաթի համար էլ օգտակար է: Նոյն խառնուրդները տալիս են նաև թթված: Նախ վերցնում են դարման, արմատապտուղներ և քիչ էլ խառն խոտ: Նախ քան այս նիւթերը երար

1. Փորձուած է որ կովերի եղջիւները արմատներից կտրատելով, նրանց կարը կաւելանայ եւ միանգամայն կդիրանան: Բայց այս զործը պէտք է կատարել քանի որ անառունները փսփ են, այսինքն քանի որ եղջիւները դուրս ցցուած չեն: Երբ որ երինչի եղջիւների տեղը կախի ուռչի, յառաջ քան այդ ուռուցքը կարծրանալը, պէտք է նախ մկրատով եղջիւների տեղը բուռած մազերը տակից կտրել եւ յետոյ եղջիւների տեղը մատով պարզ ջրով բրչել եւ վրայից ամբողջ եղջիւրի արմատի վրայ դժոխակար (կապուտքար) խել եւ երբ մորքը ոկխի փափկի եւ կարմրանալ, բեշի, որպէս թէ արիւն դուրս պիտի զայ, պէտք է դադարել խելուց: Թացուրիւնը խիս կարեւոր է, որպէս զի դժոխակարը կարողանայ ազդել, միայն չպէտք է չափազանցուրեան նասցնել, որպէս զի ջուրը նակատի վերայ վագելով վերքը չմնծացնել:

Եղջիւներ կտրատելով կովի կարի աւելանալու եւ զիրանալու պատճառը նմանեցնում են մի ծառի, որի երէ աւելորդ նիւթերը կտրատուն, աւելի մեծ պտուղներ կտայ: Որով եւ ծառի կենական նիւթը չի փշանայ, մի անօղու զործարան յառաջ բերելով:

վերայ լցնելը՝ կոշտ և նեարդաւոր կերերը, արմատապուղները, եղիպտացորենը, գետնախնձորը կտրտում, մանրում են և յետոյ այդ խառնութդի վերայ լցնում են այնքան սառը կամ աւելի լաւ է տաք ջուր՝ ու խառնում, մինչև որ բոլորը թրջուի, փափկի: Խոհանոցի և կաթնատան ջրերն ևս օգտակար է գործածել այս նպատակով: Զուրը լցնելուց յետոյ ամանի բերանը փակում են և մի ժամ կամ մի օր անցնելուց յետոյ տալիս են կոլերին: Այս կերպ պատրաստած կերը կոլերը հեշտութեամբ են ուտում ու առողջ մնում, որովհետեւ հեշտ ու գժուար մարսելու նիւթերը խառնուած լինելով՝ աւելի գիւրին կմարսուին:

Հաստատուած է, որ խմորուած կերերը կենդանիները աւելի ախորժակով են ուտում: Ահա քսան տարի է, որ սկսել է տարածուել կերերի այս եղանակով պատրաստելը: Գրեթէ ըռլոր կերերը՝ չոք կամ թրջած, ջրալի, եթէ մի քիչ խմորուին, աւելի օգտակար և շահաւետ կլինին: Երկար ժամանակ կատարուած փորձերը ցոյց են տուել, որ եթէ մի օր յառաջ կերերը կտրատուեն և դարմանի մանրունքի, հոտած խոտի, հացահատիկների կամ արմտիքների կճեպների հետ խառնուեն, աւելի շատ քանակութեամբ մննդարար նիւթեր կտան, քան իսկոյն կտրատուած և տրուածները կամ առանձին առանձին տրուած դարմանը, խոտը և կճեպները ևայլն: Այսպէս խառնուած և խմորուած նոյն խոկ նուազ ոնննդարար կերերը համովնալով, գրգռում են կենդանիների ախորժակը և աւելի շատ քանակութեամբ ուտել են տալիս: Ամրան սկզբներին եթէ չոք և կանաչ խոտեր միաժամանակ քիչ խառն տրուի, կենդանիները կսկսեն ուտել կանաչ խոտը և ոչ չորը, բայց եթէ իրարու հետ լաւ խառնուած լինեն, երկուտից էլ հաւասարապէս կուտեն: Հացահատիկների, արմտիքների կճեպների, դարմանի, գետնախնձորի հետ կարելի է խառնել նաև քիչ փչացած խոտեր, որոնց համն ու հոտը անտարակոյս պիտի զղուեցնէլին կենդանիներին, եթէ առանձին գործ ածուեին:

Կաթնատու անասուններին, առաւել ևս կոլերին երբեք չպէտք է կերակրել փչացած, թթու խոտերով, որովհետեւ, ինչպէս վերեւ տեսանք՝ այդպիսի կերը կաթի վերայ վատ ներդործութիւն է ունենում: Չպէտք է շատ ուտեցնել նաև վարսակի դարման: Կթի կովերի կերը կարիք չկայ նոյն խոկ եփել, խաշել և մի որ և է այլ կերպ պատրաստել: Թէպէտ այս կերպ պատրաստելը համեղ է, բայց քնքուշացնում և փափկանունդ է դարձնում կենդանու ստամպը: Կաթնատու կովը, որ ձմեռը խոտ ու դարման և այլ գժուարամարս նիւթեր պէտք է ուտէ,

անպատճառ մաքուր, առողջ և ոչ քնքոյշ ստամոքս պէտք է ունենայ:

Յդի կովերը, որոնք միաժամանակ տալիս են կաթ և կերակրում հողթերին, պէտք է աւելի առատ մննդարար կեր ստանան: Այսպիսիների համար պէտք է խուսափել գործ ածելուց մի քանի տեսակ կերեր, որոնք դորձարանական արգեւնաբերութեան մնացորդներն են՝ ներկայացնում, որպէս զի վեժումն չը յառաջանայ (չհորթատէ): Դոյն զգուշութիւնը պէտք է պահպանել նաև սառած կաթոֆիլի և ուրիշ փշացած կերերի վերաբերմամբ:

Կանոնաւոր և սննդարար կերը լւր մէջ բացի սպիտակուցից, ճարպից, ածխաջրածնից, պէտք է պարունակէ նաև զանազան հանքային նիւթեր: Կերի մէջ հանքային նիւթերի, մանաւանդ ծծմբային թթուի և կրի բացակայութիւնը խիստ զգալի կերպով արտայայտում է կենդանեաց վերայ նոքանուազում, ուժասպառ են լինում, որովհետեւ կաթի միջից անգագար դուրս է հանուում զգալի չափով ֆոսֆորաթթու կիր (ֆօքֆօրոհօկիւլայ ունետէ): Կաթնատու անասուններին խոտով կերակրելիս շատ քիչ դէպքերում միայն գուցէ հարկաւորուի մտածել այս նիւթերի մասին: բայց եթէ կերը բազկացած լինի բացառապէս դարմանից, թեփից, արմատապտուզներից և այլն, օգտակար և նոյն իսկ անհրաժեշտ է գործ ածել երբեմն երբեմն քիչ քանակութեամբ կիր (լաւ է գործածել կաւիճ) և կամ սոկրի փոշի:

Հասարակ աղն ևս օգտակար է կիթի կովերին: Նա սաստկացնում, աւելացնում է նիւթերի փոխանակութիւնը և նպաստում կաթի առատ արտադրուելուն: բացի դրանից աղը համեղ է դարձնում կերը և դրգուում կենդանու ախողժակը: Սովորաբար եղջիւրաւոր անասուններին ստուած աղի քանակը փակիւսական է: այսպէս օրինակ, երբ նոքա արածում են աղոտ դաշտերում և կամ ծովափնեայ տեղերում և կամ եթէ նոցաձմբան կերած խոտը հաւաքած է այդպիսի տեղերից, այն ժամանակ պէտք է քիչ աղ տալ: Սովորաբար կիթի կովերին տալիս են օրական  $1\frac{1}{2}$ – $2\frac{1}{2}$  լոտ աղ, երբեմն և աւելի, հետեւապէս և տարեկան կհարկաւորուի  $11\frac{1}{2}$ – $28\frac{1}{2}$  գրուանքայ: Աղը պէտք է խառնել կամ չոր կերի և կամ ամէնից լաւն է լափի հետ և այնպէս գործածել: Երբէք կովերի առաջ չպէտք է աղի այնպիսի կտորներ զնել, որ նոքա կարողանան միանդամնոց կուլ տալ, որովհետեւ այդպիսի կառները ընկնելով կենդանու ստամոքսը, այնտեղի մաղասային թաղանթի ըորբոքումն և պատերի վերայ վերքեր և ուրիշ հիւանդութիւններ են յառաջացնում:

Թէորգ Առաքելան

